ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«24» հոկտեմբերի 2016թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի պետ

_____ Մ. Անանյան

ԳԲԽ-107/16 բողոքը քննող

հանձնաժողովին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 112-113-րդ կետերով՝ հայտնում ենք հետևյալը.

1. **«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը**

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 14.10.2016թ. ներկայացրած բողոքով «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը (այսուհետ նաև՝ Կենտրոն) հայտնել է, որ «Անհայտ» անձը (այսուհետ՝ նաև Ահազանգող) 13.10.2016թ. ժամը 12:19-ին ահազանգել է Կենտրոնի թեժ գծին և հայտնել, որ «ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե»-ի

(այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից գրասենյակային գույքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ԿԱ ՊԵԿ-ՇՀԱՊՁԲ-15/9-16/9» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) հրավերի Հավելված 1-ի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի, 3-րդ չափաբաժնում Պատվիրատուի կողմից չի նշվել ձեռքբերվող ապրանքի չափսերը՝ նշված է միայն ապրանքի անվանումը՝ չիրկիզվող պահարան, այսինքն՝ ձեռքբերվող ապրանքը հստակ չի նկարագրված:

Ըստ Ահազանգողի՝ խախտվել են գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները՝ խնդրելով, որպեսզի Ընթացակարգը հայտարարվի չկայացած:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի թեժ գծին ստացված ահազանգի վերաբերյալ «ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն» 17.10.2016թ. գրությամբ հայտնել է, որ «ՀՀ ԿԱ ՊԵԿ-ՇՀԱՊՁԲ-15/9-16/9» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի 3-րդ չափաբաժնում նշված ապրանքի տեխնիկական բնութագիրը լրակազմ է:

Պատվիրատուն գրությամբ հայտնել է նաև, որ մասնակիցներից ոչ մեկը Ընթացակարգի հրավերի վերաբերյալ ս/թ. սեպտեմբերի 20-ից 24-ը ընկած ժամանակահատվածում պարզաբանում չի պահանջել և 29.09.2016թ. Ընթացակարգի հրավերի 3-րդ չափաբաժնով հայտ է ներկայացրել չորս մասնակից, որից հետո հայտերի գնահատման փուլում մեկ մասնակից համարվել է ընտրված, որի ներկայացրած փաստաթղթերը և տեխնիկական բնութագրերը համապատասխանել են Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին և վերջինիս սահմանված կարգով՝ անգործության ժամկետի ավարտից հետո, կառաջարկվի կնքել պայմանագիր:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռքբերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով այլընտրանքային մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից, դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռքբերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

Օրենքի 25-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հրավերը պետք է պարունակի գնման առարկայի բնութագրերը:

Ներկայացրած բողոքով՝ Կենտրոնը գտել է, որ «ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե»-ի կողմից խախտվել են Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ կետերով և 25-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով սահմանված պահանջները, քանի որ Պատվիրատուն Ընթացակարգի հրավերի Հավելված 1-ի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի, 3-րդ չափաբաժնով ձեռքբերվող ապրանքի տեխնիկական բնութագրի սյունյակում նշել է միայն՝ պողպատյա, երկդարակ, հատուկ կոդով՝ չներառելով գնման առարկայի ամբողջական և հստակ նկարագիրը, որը հանգեցրել է գնման գործընթացում չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի դադարեցնելու գնումների ընթացակարգի ընթացքում պատվիրատուի կամ գնահատող հանձնաժողովի կայացրած առանձին որոշումներ:

Կարգի 112-րդ կետի 5-րդ ենթակետի «դ» պարբերության համաձայն՝ քննարկման արդյունքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտում արձանագրվելու դեպքում, կենտրոնի պետի հանձնարարականով, կենտրոնը բողոքարկման գործընթաց է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում:

Նույն ենթակետի «ե» պարբերության համաձայն՝ կենտրոնի կողմից բողոքարկման խորհուրդ բողոքը ներկայացվում է գրավոր՝ կենտրոնի պետի կողմից, որում ներառվում են պատվիրատուի անվանումը և գտնվելու վայրը, բողոքարկվող գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան, կենտրոնի կողմից արձանագրված խախտման առարկան և պահանջը, ահազանգող անձի պահանջը (եթե նման պահանջ առկա է), բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները, այլ անհրաժեշտ տեղեկություններ.

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 112-րդ կետի 5-րդ ենթակետի «դ» և «ե» պարբերությամբ՝ Կենտրոնը ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին խնդրել է քննության առնել «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի ներկայացրած բողոքը և դադարեցնել «ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե»-ի կողմից գրասենյակային գույքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ԿԱ ՊԵԿ-ՇՀԱՊՁԲ-15/9-16/9» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հանձնաժողովի 2016թ. սեպտեմբերի 20-ի թիվ 1 որոշմամբ հրավերի տեքստը հաստատելու մասին որոշումը՝ թիվ 3-րդ չափաբաժնի մասով:

Կենտրոնում 2016թ. հոկտեմբերի 21-ին ժամը 17:00-ին տեղի ունեցած ԳԲԽ-107/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստի ժամանակ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը պնդել է բողոքով ներկայացրած դիրքորոշումը:

2. «ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե»-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները

«ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն» 17.10.2016թ. գրությամբ Կենտրոնի կողմից 14.10.2016թ. ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնել է հետևյալը.

«ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե»-ի կողմից գրասենյակային գույքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ԿԱ ՊԵԿ-ՇՀԱՊՁԲ-15/9-16/9» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի 3-րդ չափաբաժնում նշված ապրանքի տեխնիկական բնութագիրը լրակազմ է:

Պատվիրատուն գրությամբ հայտնել է նաև, որ մասնակիցներից Ընթացակարգի հրավերի վերաբերյալ ս/թ. սեպտեմբերի 20-ից 24-ը ընկած ժամանակահատվածում պարզաբանում չի պահանջվել և 29.09.2016թ. Ընթացակարգի հրավերի 3-րդ չափաբաժնով հայտ է ներկայացրել չորս մասնակից, որից հետո հայտերի գնահատման փուլում մեկ մասնակից համարվել է ընտրված, որի ներկայացրած փաստաթղթերը և տեխնիկական բնութագրերը համապատասխանել են Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին և վերջինիս սահմանված կարգով՝ անգործության ժամկետի ավարտից հետո, կառաջարկվի կնքել պայմանագիր:

3. ԳԲԽ-107/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-107/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1.«ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե»-ի կողմից գրասենյակային գույքի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ԿԱ ՊԵԿ-ՇՀԱՊՁԲ-15/9-16/9» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ, որը հաստատվել է ընթացակարգի հանձնաժողովի 2016թ. սեպտեմբերի 20-ի թիվ 1 որոշմամբ:

2. «Անհայտ» անձը 13.10.2016թ. ժամը 12:19-ին ահազանգել է Կենտրոնի թեժ գծին և հայտնել, որ «ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե»-ի կողմից գրասենյակային

գույքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ԿԱ ՊԵԿ-ՇՀԱՊՁԲ-15/9-16/9» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի Հավելված 1-ի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի, 3-րդ չափաբաժնում Պատվիրատուի կողմից չի նշվել ձեռքբերվող ապրանքի չափսերը՝ նշված է միայն ապրանքի անվանումը՝ չիրկիզվող պահարան, այսինքն՝ ձեռքբերվող ապրանքը հստակ չի նկարագրված:

3. Ընթացակարգի հրավերի Հավելված 1-ի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի, 3-րդ չափաբաժնով՝ ապրանքի անվանումը սյունյակում, նշված է՝ ***չիրկիզվող պահարան***, իսկ ապրանքի տեխնիկական բնութագիրը սյունյակում՝ ***պողպատյա, երկդարակ, հատուկ կոդով***:

4. <u>ԳԲԽ-107/16 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը</u>

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Անհայտ անձի» կողմից 13.10.2016թ. ժամը 12:19-ին Կենտրոնի թեժ գծին ներկայացրած ահազանգը, «ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե»-ի 17.10.2016թ. գրությունը և «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի 14.10.2016թ. բողոքը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռքբերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով այլընտրանքային մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից, դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռքբերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

Օրենքի 25-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հրավերը պետք է պարունակի գնման առարկայի բնութագրերը:

«Անհայտ» անձը 13.10.2016թ. ժամը 12:19-ին ահազանգել է Կենտրոնի թեժ գծին և հայտնել, որ «ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե»-ի կողմից գրասենյակային գույքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ԿԱ ՊԵԿ-ՇՀԱՊՁԲ-15/9-16/9» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի Հավելված 1-ի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի, 3-րդ չափաբաժնում Պատվիրատուի կողմից չի նշվել ձեռքբերվող ապրանքի չափսերը՝ նշված է միայն ապրանքի անվանումը՝ չհրկիզվող պահարան, այսինքն՝ ձեռքբերվող ապրանքը հստակ չի նկարագրված:

Ընթացակարգի հրավերի Հավելված 1-ի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի, 3-րդ չափաբաժնով՝ ապրանքի անվանումը սյունյակում, նշված է՝ չհրկիզվող պահարան, իսկ ապրանքի տեխնիկական բնութագիրը սյունյակում՝ պողպատյա, երկդարակ, հատուկ կոդով:

Այսպիսով, Կենտրոնի կողմից վերոհիշյալ ահազանգի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Պատվիրատուի կողմից կազմակերպված Ընթացակարգի

հրավերի Հավելված 1-ի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի, 3-րդ չափաբաժնով սահմանված ապրանքի տեխնիկական բնութագիրը ամբողջական և հստակ չի նկարագրված, որը հանգեցրել է գնման գործընթացում չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը:

Այսպիսով, հաշվի առնելով, որ Պատվիրատուի կողմից խախտվել են Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ կետերով և 25-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով սահմանված պահանջները, ուստի Կենտրոնը առաջարկում է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի 14.10.2016թ. ներկայացրած բողոքը բավարարել. դադարեցնել «ՀՀ ԿԱ ՊԵԿ-ՇՀԱՊՁԲ-15/9-16/9» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2016թ. սեպտեմբերի 20-ի թիվ 1 որոշմամբ հրավերի տեքստը հաստատելու մասին որոշումը՝ թիվ 3-րդ չափաբաժնի մասով:

Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ

Գնումների բողոքարկման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի առաջատար մասնագետ՝ ԳԲԽ-107/16 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Տ. Գևորգյան